Ի՞նչ է փաթեթավորումը

Դասապլան

Ներածություն

Ապրանքի փաթեթավորումը հաճախ պարունակում է տեղեկություն ապրանքի պարունակության, գնի և քանակի մասին, որտեղ է արտադրվել ապրանքը, կամ ինչպես և երբ այն պետք է օգտագործվի: Փաթեթավորման վրա երբեմն կան կարևոր նշաններ, ինչպիսիք են՝ վերամշակման նշանը, բաղադրիչների աղբյուրը (բուսական և ոչ բուսական), վտանգավոր լինելու նշանը և այլն:
Դասապլանը խրախուսում է աշակերտներին հասկանալ փաթեթավորման էությունը, դրա արդիականությունը և նպատակը, ինչպես նաև փաթեթավորման թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Նպատակներ

Աշակերտները կկարողանան

- բացահայտել կենցաղային ապրանքների համար օգտագործվող փաթեթավորման նյութերի տարբեր տեսակները,
- թվարկել շուկայում առկա փաթեթավորման տարբեր տեսակները,
- պատկերացնել փաթեթավորման նյութերի տարբեր տեսակները և դրանք դասակարգել ըստ դասերի:

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը. կայունության աուդիտի իրականացում, ուսումնական պլանների փոխկապակցում, մշտադիտարկում և գնահատում, իրազեկում և ներգրավում:
Ուսումնական պլանների փոխկապակցում. գիտություն, բնապահպանություն, հասարակագիտություն, թվաբանություն, մաթեմատիկա:

Eco-Schools

6-8 Տարեկան

4 QUALITY EDUCATION

11 SUSTAINABLE CITIES AND COMMUNITIES

12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION

Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Դասարանային աշխատանք 1.** 45 րոպե հատկացվում է ուսուցչին փաթեթավորմանը ծանոթացնելու համար, ինչպես նաև գունավորման և շրջանակման վարժությունը կատարելու համար:
- **Տնային առաջադրանք 1.** շաբաթական 4 ժամ փաթեթավորման մասին աշխատանքային թերթիկը լրացնելու, ինչպես նաև տարբեր տեսակի փաթեթավորման նյութեր դասարան բերելու համար:
- **Դասարանային աշխատանք 2.** 90 րոպե տրամադրվում է աշակերտներին «փաթեթավորման նյութի ներկայացում» մշակելու համար:

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Ռեսուրս 1. ձեռագործ փաթեթավորման և բնության մեջ առկա փաթեթավորման նյութի նույնականացման համար
- ռեսուրս 2. շուկայում առկա տարբեր տեսակի փաթեթավորման նյութերի ցուցակագրման աշխատանքային թերթիկ,
- աշակերտների կամ ուսուցիչների կողմից հավաքված փաթեթավորման տարբեր նյութեր,
- ցուցադրության տախտակ
- գրենական պիտույքներ աշակերտների համար՝ ներառյալ գունազարդման նյութեր (գունավոր կավիճներ/ գունավոր մատիտներ և այլ):

Գործողություններ

Դասարանային աշխատանք 1

- Սկսել փաթեթավորման վերաբերյալ ներածական քննարկում: Ավելի լավ հասկանալու՝ ինչ է «փաթեթավորումը», աշակերտներին կարելի է պարզաբանող հարցեր տալ և շարունակել աշխատել՝ հիմնվելով ստացված պատասխանների վրա:
  1. Ի՞նչ է փաթեթավորումը:
  2. Ո՞րն է փաթեթավորման կարևորությունը:
  3. Ի՞նչ խնդիրներ են առաջացնում փաթեթավորման տարբեր տեսակները:
- Աշակերտներին բաժանել ձեռագործ փաթեթավորման գունազարդման թերթ և բնության մեջ առկա նյութից պատրաստված փաթեթավորման թերթ,
- Խնդրել աշակերտներին գունավորել առարկաները, որոնք ներկայացնում են փաթեթավորումը բնության մեջ և շրջանագծել մարդու կողմից պատրաստված փաթեթավորումը:

Տնային առաջադրանք 1

- Աշակերտներին հանձնարարել լրացնել տարբեր փաթեթավորման նյութերի վերաբերյալ աշխատանքային թերթիկ՝ հիմնված տնային հետազոտության արդյունքների վրա:
- Հավաքել փաթեթավորման մի քանի նյութ և լրացված աշխատանքային թերթիկների հետ միասին բերել դրանք դասարան: Այդ նյութերն անհրաժեշտ կլինեն դասարանային 2-րդ աշխատանքի համար:
- Աշակերտներին հանձնարարել լրացնել տեղեկատվական թերթիկ 2-ը (փաթեթավորման նյութերի աղյուսակ)՝ հիմնվելով տնային աշխատանքների ընթացքում գնված և տուն բերված ապրանքների վրա:

Դասարանային աշխատանք 2

- Վերանայել և քննարկել աշակերտների կողմից լրացված աշխատանքային թերթիկները:
- Աշակերտներին հանձնարարել դասավորել մյուս աշակերտների կողմից բերված փաթեթավորման նյութերն ըստ թափոնների տեսակների (բնական կամ ձեռագործ՝ մարդու կողմից արտադրված, որոնք պետք է հետագայում բաժանվեն թղթի, մետաղի, ապակու և այլն): Աշակերտները պետք է ստեղծեն տաղավար փաթեթավորման նյութերը ցուցադրելու (օրինակ ցուցատախտակին) համար:
- Այս ցուցատախտակը պետք է պահպանվի մեկ ամիս՝ տեղեկություններ տրամադրելու և այլ աշակերտներին ներգրավելու համար:

Գնահատում

Ճիշտ առարկաների գունավորումը կօգնի ուսուցիչներին պարզել, թե արդյոք աշակերտները հասկանում են՝ ինչ են բնական և արհեստական փաթեթավորման նյութերը: Ցուցատախտակների համար փաթեթավորման նյութերի տեսակավորումը լավ միջոց կլինի գնահատելու, թե արդյոք աշակերտները հասկացել են հայեցակարգը:

Դասուրս 1

Գունավորման թերթիկ







Դասուրս 2